ՆԵՐՏՆԱՅԻՆ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

Բնակչության ներտնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունը (այսուհետ՝ Սպասարկում) իրականացվում է առնվազն մեկ անգամ՝ հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում (1-ին հաշվարկային կիսամյակ) և առնվազն մեկ անգամ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում (2-րդ հաշվարկային կիսամյակ): Սպասարկման վճարը սահմանված է ՀՀ Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից և կազմում է՝

- մեկ գազօգտագործող սարքավորման դեպքում 2270 դրամ,
- երկու գազօգտագործող սարքավորումների դեպքում 4540 դրամ,
- 3 և ավել գազօգտագործող սարքավորումների դեպքում 6810 դրամ:

Սպասարկման համար բաժանորդը վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճարի 50 տոկոսը՝ սպասարկման մատուցման ամսվանը հաջորդող հաշվարկային ամսում: Այսինքն բաժանորդը վճարում է փաստացի կատարված Սպասարկման համար:

Եթե հաշվարկային ամսում կատարվել է Սպասարկում, ապա հաշվարկային ամսվա համար ներկայացվող վճարման փաստաթղթում արտացոլվում է նաև Սպասարկման դիմաց գոյացած գումարը (տարեկան սակագնի 50 տոկոսի չափով), հակառակ դեպքում Սպասարկման դիմաց գումար չի գոյանում: Տվյալ պարագայում գործող կարգը չի պարտադրում բաժանորդներին նախօրոք գումարներ վճարել Սպասարկման համար: